են...ի մասնաւորի չատ քիչ ծանօթ է արաբական իշխանութեան ժամանակը»:

Ընդհանուր պատմութեան տեսակէտից էլ հեղինակը յոյժ կարեւոր դէպք է համարում հայ Բագրատունիների մէկ ճիւղի նոր հարստութեան հիմնումը Վրաստանում: Այդ դէպքը «վրական պատմութեան՝ արաբական շրջանին մէջ սահմանաքար մըն է»:

Միւս կողմից, այդ դէպքի ժամանակի ու պարագաների մասին «անհաւատալի խառնաշփոթութիւն մը կը տիրէ աւանդութեան մէջ»:

Այդ պատճառով էլ Մարքվարտ իր քննութեանց հաստատուն հիմ դնելու համար նախ եւ առաջ Վրաստանի Զ–Ը. դարու արտաքին պատմութեան վերաբերմամբ եղած անկասկածելի վկայութիւնները ի մի է ամփոփում, ապա հայ Բագրատունիների քննական ազգատախտակը կազմում՝ հայ եւ օտար աղբիւրների հիման վրայ, Բագրատունեաց տան իշխանութեան զարգացումը պարզում, ցոյց տալիս Բագրատունեաց՝ Վրաստան գաղթելու ժամանակը: Իր այս քննութեամբ հեղինակը վրական Բագրատունիները հետապնդում է մինչեւ Ժ. դարու վերջը:

Այս աշխատութիւնը, ինչպէս որ թարգմանիչն էլ շեշտում է իր յառաջաբանի մէջ, «հետաքրքրական է յատկապէս այն տեսակէտով, որ բազմահմուտ հեղինակը հաւաքած է հոս ի մի Բագրատունեաց տան հայող նիւթերն՝ ըստ հայ, յոյն, վիր, արաբացի եւ ասորի աղբերաց եւ դասաւորած է զանոնք ժամանակագրօրէն եւ ցեղաբանօրէն: Այսպէս ալ նկատուելու է աշխատութիւնս. ուստի թող չնկատէ հոն ընթերցողն ընդհանուր նկատողութիւններ Բագրատունի նախարարութեան դրից վրայ՝ հանդէպ միւս նախարարաց, կամ անոնց գործունէութեան վրայ՝ ի նպաստ հայ քաղաքակրթութեան եւայլն, որպիսի աշխատութեան անշուշտ ուրիշ ծրագիր եւ յարմարագոյն ժամանակ կը պահանջէր, քան որ ունի կ'ընծայէր հեղինակին վերոյիշեալ երկը»:

Թէեւ հեղինակը իր հետազօտութեանց համար աչքի առաջ ունեցել է ազգային եւ օտար կարեւորագոյն աղբիւրները, բայց եւ այնպէս նրան անմատչելի են մնացել մի քանի ուրիշներ, որ եւ իր կողմից լրացնում է թարգմանիչը:

* * *

Վերոյիշեալ ընդհանուր տեղեկութիւնները բաւական ենք համարում Մարքվարտի թուած աշխատութիւնների մասին, որոնք զուտ բանասիրական բնոյթ են կրում եւ մատչելի են ընթերցողների բաղդատաբար սահմանափակ շրջանի միայն:

Հեղինակի հայագիտական վերջին աշխատութիւնը՝ «Հայ ազգի ծագումը եւ վերականգնումը» բաղկացած է երկու մասից: Առաջինում Մարքվարտ մանրամասն քննութեան առարկայ է դարձնում մեր ցեղի ծագման, ինչպէս նաեւ նրա՝ Հայաստանում հաստատուելու խնդիրը: Երկրորդի մէջ յարգելի հայագէտը խօսում է հայոց ներկայի ու նրա միտքը յուզող ազգային քաղաքական խնդիրների շուրջը:

Վերջինս լինելով ժամանակակից եւ հրատապ, հետաքրքրական է ընթերցողների աւելի լայն շրջանակի համար: Բայց գրքի առաջին մասն եւս ներկայացնում է քննական մասնակի շահեկանութիւն, ուստի եւ աւելի հանգամանօրէն նկատի առնենք այդ աշխատութիւնը: